

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

----- 2020 թ. № ----- Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 451-Ն որոշման հավելվածի 2-րդ կետում 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծում ընդգրկվում են նաև հայտարարված զորակոչին ենթակա և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից նախկինում դրական եզրակացություն ստացած, սակայն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ չներառված քաղաքացիները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մինչև ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 1368-Ն որոշման ուժի մեջ մտնելը նշված կարգին համապատասխան ստեղծված հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած քաղաքացիներին տարկետում ստանալու հնարավորություն տրամադրելու անհրաժեշտությամբ:

#### **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված կարգով 2019 թվականի ամառային զորակոչի ընթացքում գնահատվեցին գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիների ձեռքբերումները և քննարկվեցին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նրանց տարկետում տալու հնարավորությունը: Արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ մի շարք քաղաքացիներ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացան տարկետում:

Նշված գործընթացի ժամանակ, սակայն, որոշ քաղաքացիներ, որոնք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ստացել էին դրական եզրակացություն և հավակնում էին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման, տարբեր հիմնավորումներով չեն ստացել տարկետում: Որպես օրինակ նրանցից ոմանք արդեն իսկ օգտվել են տարկետման իրավունքից և այդ տարկետումները տրվել են որպես օրենքով սահմանված տարկետումներ, դրանք չէին կարող փոխարինվել ՀՀ կառավարության որոշմամբ տրվող տարկետումներով:

2019 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարված փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո նշված քաղաքացիները 2019 թվականի ձմեռային զորակոչից տարկետման իրավունք ստանալու նպատակով կրկին դիմել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Այս անգամ, սակայն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի կողմից վերջիններիս դիմումին կցված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ նրանք ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված՝ գիտության և կրթության բնագավառում ունեցած նվաճումները հավաստող փաստաթղթերի գնահատման արդյունքում չեն կարող հավակնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք:

Իսկ առանձին դեպքում քաղաքացու ընդունված համալսարանը 2019 թվականի ձմեռային զորակոչից տարկետման իրավունք ստանալու նպատակով դիմում ներկայացնելու և վերը նշված հանձնաժողովի ուսումնասիրության ժամանակահատվածում այլևս ընդգրկված չի եղել աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման [www.shanghairanking.com](http://www.shanghairanking.com) կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում, հետևաբար նաև ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 9.1-ին կետով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով վերջինս նույնպես չի հավակնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի:

### **3. Ակնկալվող արդյունքը.**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այսուհետ հիմնավորման 2-րդ կետում նշված կարգավիճակում գտնվող քաղաքացիները կկարողանան օգտվել տարկետման իրավունքից:

### **4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ  
12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ պաշտպանության նախարարություն 20.01.2020թ. թիվ ՊՆ/510/134-2020	<p>2020 թվականի հունվարի 16-ի Ձեր N 01/10.2/554-20 գրության առնչությամբ հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»</p> <p>Կառավարության որոշման նախագծի քննարկման արդյունքներով առաջարկվում է լրացում կատարել որոշման հավելվածի 5-րդ կետում՝ լրացնելով հետևյալ նոր նախադասությունը.</p> <p>«Սույն կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծում ընդգրկվում են նաև հանձնաժողովի կողմից նախկինում դրական եզրակացություն տրված, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում չստացած քաղաքացիները, որոնց վերաբերյալ հանձնաժողովը կրկնակի եզրակացություն չի ընդունում:»:</p>	Չի ընդունվել	Քանի որ, անկախ այն հանգամանքից, որ նախորդ զորակոչի ժամանակ քաղաքացին ստացել է դրական եզրակացություն, տվյալ զորակոչից տարկետում ստանալու համար վերջինս նույնպես պետք է դիմում ներկայացնի, որը չքննարկելու համար հանձնաժողովը չունի իրավական հիմքեր:

